ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

« ՀՈՎՏԱՇԵՆԻ Վ. ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

N 35

էլ. հասցե՝ hovtashen@schools.am

Հեռ. 093-98-84-21

11.11.2025թ.

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետ
պարոն Ս. Թևոնյանին

Հարգելի պարոն Թևոնյան

Ներկայացնում եմ Ձեզ հայտարարություն <<Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, ուսուցչի թափուր տեղի մասին:

Առդիր 1 էջ:

Դպրոցի տնօրենի պաշտոնակատար Հ. Ղազարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Կենսաբանություն» առարկայի /14 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ, միջին մասնագիտական կրթություն և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթի մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ)
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 24-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. նոյեմբերի 28-ին՝ ժամը 14:00-ին, Արարատի մարզի Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Հովտաշեն, Բարեկամության 23: Տեղեկությունների համար զանգահարել 093-98-84-21 հեռախոսահամարով: